

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Маскъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Երկու ցեղեր.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տուէք
մի մայրը. Փողոցի զօրադրները. Մեր ուսու-
ցիչները գործունէութիւնը. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ (ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆինանսական խնդիրը
Ֆրանսիայում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. Թափառական քուրդ
ցեղերը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երեւանեան նահանգում միմեանց հարե-
ւանութեամբ ապրում են երկու ազգու-
թիւններ, կամ աւելի լաւ է ասել երկու
ցեղեր. հայերը և թուրքերը. Գիտելով
նրանց երկուսի նիստ ու կացը, նրանց հա-
տարակական ու անտեսական կեանքը, ու-
սումասիրելով նրանց հակումներն ու բնա-
ւորութիւնը, մարդ աչն եզրակացութեանն
է գալիս, որ չը նայելով թէ երկու ցեղերն
էլ տղէտ են, երկուսն էլ նախապաշարված
են, երկուսն էլ ունեն խոշոր բարոյական
պահանջութիւններ, սակայն միմեանք առա-
ջին ցեղը, այսինքն հայերը, մեծ ընդու-
նակութիւն են ցոյց տալիս դէպի առաջա-
դիմութիւն, անկարգիւցիչ հակում դէպի
ուսում և լուսաւորութիւն, անպայման ձգ-
տում դէպի աշխատանքի, արդիւնաբերու-
թեան, անտեսական կեանքի նոր ձևերը.—
միւս ցեղը, այսինքն թուրքերը, դարերի
ընթացքում մնում են մի և նոյն անշարժ
ըրութեան մէջ, և յամառութեամբ չեն ու-
ղում մի քայլ անգամ անել դէպի առաջ.

Գիւղացի հայը բացի աշխատանքի լինե-
լուց, հնարագէտ, ժամանակի պահանջնե-
րին յարմարող լինելու հակումներ է ցոյց
տալիս.

Ընդհանրապէս թուրքը դարերի ընթաց-
քում մնում է այն, ինչ որ էր դարերից ա-
ռաջ և յամառութեամբ չէ կամենում մի
քայլ անգամ անել դէպի առաջ.

Քաղաքացի հայը, ինչպէս և քաղաքացի

թուրքը մինչև այժմ երկու միջոց միայն
հարստանալու, իր անտեսական
կեանքն ապահովելու,—դա առևտուրն էր
(կամ աւելի լաւ է ասել մանրավաճառու-
թիւն և չարչիութիւն) և վաշխառութիւ-
նը. Բայց վերջին ժամանակները հայերի
մէջ նշմարվում է ձգտում դէպի ընկերակ-
ցութիւնների կազմակերպելը, դէպի ար-
դիւնագործութեան նոր ձևերի ընդունելը,
հայը սկսում է պարագիւլ արհեստներով,
գործարանական այլ և այլ ճիւղերով, հիմ-
նում է թէ փոքր և թէ մեծ զիւրքով ար-
հեստանոցներ, այլ և այլ գործարաններ,—
իսկ թուրքը մնում է յամառութեամբ իր
հին պարագիւլների մէջ. նա կամ վա-
ճառական է (մանրավաճառ թէ Պարսկաս-
տանից բերվող ապրանքների ծախող), կամ
վաշխատու է, ուրիշ ոչինչ.

Եւ այդ նոյն երկուցից նշմարվում է ոչ
թէ միայն երեւանեան նահանգում, բայց
մեր Անդրկովկասի բոլոր նահանգներում.

Գուցէ մեզ կասեն որ համեմատելով
եւրոպական ազգերի հետ հայն էլ շատ
մեծ հակում է ցոյց տալիս դէպի քաղա-
քակրթութիւնը.—դրան մեք համաձայն
ենք. Բայց համեմատելով հային մեր երկրի
միւս ազգութիւնների կամ ցեղերի հետ,
չենք կարող չը խոստովանել, որ հայի ու
մեր երկրի միւս ցեղերի հետ տարբերու-
թիւնը մեծ է. Ո՛վ չը գիտէ, որ մեր երկ-
րի Ռուսաստանի ձեռքով նուաճելու րօ-
պէից մինչև այսօր միակ բնիկ ազգը մեր
երկրում, որը անպայման հակում ունի
դէպի լուսաւորութիւն և քաղաքակրթու-
թիւնը եղել են միշտ հայերը և միմայն
հայերը.

Հայերի անցեալը, նրանց ներկան, նրանց
դարոցները, նրանց հին և նոր գրականու-
թիւնը, նրանց մամուլը, նրանց երկրագոր-
ծութիւնը, առևտրական ընդունակութիւն-
ները, նրանց աշխատասիրութիւնը, նրանց
հակումը դէպի լուսաւորութիւնը.—այդ բո-
լորը ջոկում է հայերին մեր երկրի բոլոր
միւս նրանց շրջապատող ազգերից.
ձշմարիտ է, հայերն ունեն մեծ պակա-

տութիւններ, նրանք դեռ ևս շատ բանե-
րում նախապաշարված են, նրանք դեռ ևս
շատ անգամ չը գիտեն անկեղծ կերպով վերա-
բերվել դէպի իրանց կուլտուրական ֆակտոր-
ները, նպաստել նրանց վերանորոգութեան
գործին համեմատ ժամանակակից պահանջ-
ման.—սակայն աւելի լուսաւորվելով յոյս
կայ, որ հայերը հետզհետէ անկեղծ կեր-
պով կը յարվեն ընդհանուր, համամարդ-
կային քաղաքակրթութեան գործին.

Մեր երկրի հայերի կեանքի երկրորդ
ֆակտին այն կը լինի, որ իրանց անկեղծ
և բացարձակ կերպով ողջ կոխած լինելով
ընդհանուր լուսաւորութեան և քաղաքակր-
թութեան լայն ճանապարհի վրա և նրանով
հաստատ քայլերով ընթանալով.—կը սկսեն
ներդրել նոյն ուղղութեամբ և մեր երկրի
միւս ազգերի վրա. երբ որ հայերը հաս-
տատուն կերպով կընթանան այդ ճանա-
պարհով, բարձր կը պահեն քաղաքակրթու-
թեան դրօշակը, համ իրանց վերաբերմամբ
անկեղծ կերպով կը դիմեն լուսաւորութեան
և քաղաքակրթութեան բարեբեքներին, համ
էլ քաղաքակրթական կը ներդրեն հարե-
ւան, իրանց շրջապատող, իրանցից բարոյա-
պէս և մտաւորապէս աւելի ստոր աստիճա-
նի վրա կանգնած ազգերի վրա.—այն ժա-
մանակ նրանք մեծ օգուտ կը բերեն համ
իրանց, համ իրանց հարեւաններին, համ
էլ ամբողջ պետութեանը, որի քաղաքացի-
ներն են, քանի որ այդ նոյն պետութեան
համար կը պատրաստեն աւելի նպաստաւոր
հող ընդհանուր մարդկային կուլտուրան,
քաղաքակրթութիւնը երկրի մէջ տարածե-
լու համար.

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՏՈՒՆԻՔ ՄԵՃ ՄԱՐԵՐ

I

Տուէք մեզ մայրեր, կը տանք ձեզ այրեր.—
ահա ձեզ մի ֆրազ, որ մի առանձին ողբերու-
թեամբ կըրկում էին մի ժամանակ մանկավարժ-

ները և բարոյագէտները. իսկ ով որ աւելի է ու-
նեցել երբ և իցէ լսելու հայոց դպրոցներում ճա-
ռախօսութիւններ աղջիկներ կըրթեան մա-
սին, կամ կարդալու հայ մանկավարժների ձգձը-
ղած յօդաւածները մօր պարտաւորութիւնն
էր ի մասին, նա ևս, անկասկած, տեսած կը
լինի, թէ ինչպէս ամեն անգամ մեր մանկավարժ-
ները յուղված կերպով գոչում են՝ «տուէք մեզ
լաւ մայրեր, կը տանք ձեզ այրեր».

Այս որոնքից տանք լաւ մայրեր.—ահա այն
տխուր հարցը, որ մարդու յիշողութեան մէջ
արթնանում է, երբ լսում է այդպիսի ողբերու-
թեաներ.

Ահա մեր առաջ կանգնած է հայ կինը, հայ
մայրը իր ամբողջ պատկերով. փոքր ժամանակ
ընտանեկան շրջանում սովորելով աւանդական դա-
նադան միակողմանի, սխալ հայեցակէտերով, նա
մտնում է դպրոց, և այնտեղ էլ մի առանձին
բան չը սովորելով, դուրս է գալիս դպրոցից դա-
տարկ գլխով դատարկ սրտով, և այն բոլորից
նա դառնում է միայն մի մարդ.—մարդու զը-
նայ.

Մարդու գնալու մտքի հետ մեր օրիորդին չեն
դադարեցնում այն պարտաւորութիւնները, որոնք
կապված են մօր կոչման հետ. Նա չէ կարողա-
նում բժշկան, հասկանալ անգամ, որ ամուսնու-
թեան հետ կապված է մի մեծ խնդիր, մի մեծ
պարտաւորութիւն, այն է մօր պարտաւորութիւ-
նը, որի մասին այնքան դրել, այնքան խօսացել
են, և որը թէև ինչքան ըստ ինքեան շատ հին խն-
դիր է, բայց կեանքի մէջ մինչև այժմ էլ մնացել
է մի չը լուծված հարց, մի հանելուկ.

Ոչոք չէ պատրաստում կնոջը մի փոքր ի շատէ
մեծ դերի համար, ոչոք չէ թողնում նոյն իսկ
կնոջը մտածելու և այն մասին, թէ ինչն էլ ունի
անկախ, իրան յատուկ պարտաւորութիւններ,—
բայց ամենքն էլ գոչում են՝ «տուէք մեզ լաւ
մայրեր, տուէք մեզ լաւ կանայք».

Ոչ ընտանեկը, ոչ դպրոցը, և ոչ ոք չէ մտա-
ծում հանելու կնոջը իր միշտ կրաւորական,
միշտ սահմանափակ դրութիւնը, ամենքն էլ հա-
լածում են այն միտքը, թէ կինը, իբրեւ մարդ,

խաբէրում, հեռու հայրենիքից, ընկերներից և
սրտակից բարեկամներից և որ թշնամին կը դա
ահա և սրի մի հարեւանով, կը վերջացնէ ձեռ
կեանքը....

Այդ միջոցին սկսում էք ամբողջ մարմնով
դողդողալ....

Հետաքրքիր է քրդերի ամուսնութիւնը և նրանց
խնամութեան պայմանները.

Ինչպէս յայտնի է քուրդ երիտասարդներ ի
հնուց անտի սովորութիւնն ունեն, իբրեւ մեծ քա-
կողմից պարում «գալիլի-դինո» քրդական պարը,
Չադորթութիւն, աղջիկներ փախցնել մէկ մէկուց.
Այդ դէպքում ցեղական կոիւններ և ընդհանուր
ներ շատ են պատահում. Որինակ, եթէ մի քուրդ
օրիորդ փախչում է իր սիրած երիտասարդի հետ
և եթէ վերջինս չէ համաձայնվում, գուցէ նոյն
իսկ աղջկայ դրդամբ, իր փախցած օրիորդի
ծնողների պահանջած «գալանք» լիովին վճարե-
լու,—այն ժամանակ երկու կողմից ևս սկսվում
են սարսափելի կռիւներ և կուսակցական անվերջ
տարաձայնութիւններ, որոնք երբեմն արհեստեղու-
թեան պատճառ են և այն, որ աղջիկ փախցնող քուրդ
երիտասարդը, եթէ ունենում է «աղապ» քուրդ,
տալիս է իր քուրդ իր փախցած կնոջ փոխա-
րէնը նրա եղբայրներից միմեան, եթէ վերջինս հա-
մաձայնվում է. Հակառակ դէպքում, փախցնողը
անշուշտ պարտաւոր է դառնալ վճարել, առանց
մի որ և է պատճառի. Կան և այնպիսի հանգա-
մանքներ, որ քրդերը միմեանց համաձայնութեամբ
փոխարինում են իրանց աղջիկները իրար հետ.
այսինքն, մի ընտանեկ տալիս է միւս ընտանեկին
մի աղջիկ. նրանց հարսնացու լինելու համար,
իսկ ինքը նոյնպէս բերում է նրանցից դարձեալ

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԹԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՒՐԻ ՑԵՂԵՐԸ

Քիչ չէր մեր դարմանքը, երբ առիական կեան-
քով հեղեղված քրդութիւնները թէ հասակաւոր
կեանքը, թէ նորահայտները և թէ օրիորդները,
առանց երեսները ծածկելու և առանց ամաչելու,
ինչպէս այդ անում են հայ գեղջկանները, դուրս
էին գալիս դիմաւորելու նոյն իսկ օտար հիւրե-
րին. Նորահայտ քրդութիւն մինչև անգամ պատ-
րաստ է ձեռ ամեն մի հարցմունքին պատշաճա-
ւոր պատասխան տալու.

Քրդութիւն ամառիկները, երբ որ հիւրեր է ու-
նենում, իսկոյն վառում է չորս սալաքարերից
չինված «չար—բերին» (փոքր լեռնի է) և հիւ-
րերի համար կերակուր եփում. Պէտք է ասած,
որ քուրդ տանտէրը իր «բերվալին» հիւրասիրում
է ընտիր կերակուրներով. Մի երկու ժամ անց
նկուց յետոյ, հաւ մի մեծ պղնձեայ սինի մէջ
լցրած բրնձէ փլումը դրվում է հիւրերի առաջ.
Իսկ փլակ չուրջը, մի քանի տեղ լցրած է
մօթիլի պանիր՝ ժամիկի խառնուրդով. Տան
բոլոր աղմուկից հիւրերի հետ միասին չըջա-
պատում են կերակրով լցրած սինին. դրանք
չը կան այդտեղ, պէտք է ձանկերով ուտել. 6—7
հողաց բաղդացած սեղանաւորները, որոնք բոլորի
են մի և մի կերակուրի չուրջը, սկսում են
ձանկել իւրաքանչիւր կերակուրը, փառք.
Շատ սարսափելի կեանք են վարում քրդերը.

Իրանց բանական. երեկոները, նոյն իսկ օգոստոս
ամսին, սաստիկ ցրտից դողդողում էինք. Մի
կողմից չըջակայ բարձր սարերից փչում է սառը
և ցուրտ քամին, միւս կողմից՝ գիւղական ցրտա-
բեր հովը ձիւնի պէս ցոլ է գոյացնում անկողնիդ
վրա. իսկ անձրեկ տեղում միջոցին թափանցիկ
վրանի ծակոտիները անձրեկի անսուր կաթիլները
մաղվում են մարդու վրա. Վրանում ճրագը վա-
ռելու հնար չը կայ. անդադար փչող քամին
հանգստում է վառվող ճրագը. Յրտից ստիպված
տան ամբողջ ընտանեկը՝ կանայք վրանի մի կող-
մում, իսկ տղամարդիկ հիւրերի հետ միւս կող-
մում, կրակի խառնի շրջապատած և կարպետ-
ների կամ թաղիքեայ «կուլաքներ» հագած՝ նստում
են տաքանալու. Այդ վարվող խառնից ամպերի
նման բարձրացող ծովեր ուղղակի լցվում է
շրջապատողների աչքերը, որոնցից արտասուքի
առատ կաթիլները թանում են նրանց կապտա-
ցած դէմքերը.

Արեւ մայր մտնելուց յետոյ, երբ մութը պա-
տում է, թէ տաւարները և թէ ձիւնը բերում են
արածելուց և չարքով կապում վրանի առաջ
գետնի վրա ամբարձրած ցեղերից. հեղեղը առան-
ձին չարք, իսկ կովերը առանձին՝ կապում են
պարաններով. Բայց ձիւնին կապելու համար
քրդերը ունեն մի առանձին շղթայ, որը ունի
երկու թիղ երկարութիւն և որի երկու ծայրը
օղերը անցկացնելով ձիւն առաջին երկու ոտները
կողպում են. Այդ գործը կոչվում է «բիտի» և
դա նրա համար է, որ գողերը չը կարողանան
գողանալ ձիւն.

Վրա է հասնում գիշերը.
Մի թաղիք ծառայում է ձեզ ներքնակի տեղ,

իսկ վերմակիդ վրա՝ չը մրսելու համար՝ տարած-
ված է մի մեծ քրդի «բառ» (կարպետ). Անկող-
նում պառկած նայում էք դէպի աստղալից եր-
կինքը. Պարզ է երկինքը. արծաթափայլ լուսինը
մեղմ ու հանդարտ գոյովում է կապտա երկնա-
կամարի հորիզոնի վրա, թափելով իր լոյսը դէպի
երկրի ծակերնորթ.... Ուշադրութիւնը լարվում է
է.—Ահա քրդական բանակի մի ծայրից լսվում է
մի խուրդ երիտասարդների և օրիորդների երգի
քաղցր ձայնը. նրանք իրար ձեռք բռնած՝ մի
կողմից պարում «գալիլի-դինո» քրդական պարը,
իսկ միւս կողմից միաձայն երգում են իրանց
յօրինած սիրահարական երգը. Կրան հակառակ՝
բանակի միւս ծայրում մի այլ խումբ, չըջակա-
տած իրանց պապական «պարկի-պղուլը» ծանր
կերպով պարում է «գէօլընը» նուիրական պարը.
Մի կարծ միջոցից յետոյ վերջանում է այդ
հասարակական ամառային պարերը. գիշերային
լուսթիւն տիրում է ամեն ուղեք. միմիայն հա-
տալիլ չների հաչոցն է, որ երբեմն-երբեմն
աղմկում է տիրող լուսթիւնը. Սակայն երկար
ժամանակ չէ տեսնում այդ լուսթիւնը. հեռուց
լսվում է սրնգի ձայն. դա բանակից հեռու
մերձակայ սարերի ստորոտներում գտնված ոչխա-
րի սուրունների պահապան հովիւ սրնգի ձայնն
է. Այդ սրնգի ձայնը իր ներդաշնակ և քաղցր
կէկէշներով խանդավառ է դաշտի մեռելային
լուսթիւնը. Հովիւն մինչև լոյս չէ քննում, այլ
ամբողջ գիշերը նա անդադար սրնգում է ու
սրնգում....

Գուցէ չէ մօտենում նոյնպէս ձեռ աչքերին.
հոգեկան մտաւորութիւնները ճնշում են ձեռ.
մտածում էք, որ գտնվում էք մի լեռնային աշ-

ոճի անկախ դերեր, որոնց համար նա պէտք է պատրաստվի,—բայց ամենքն էլ իրանց իրաւունքն են համարում պահանջել նոյն կանանցից այն, ինչ որ նրանց չեն տալիս, ինչ որ նրանց թոյլ չեն տալիս ունենալ....

Գպրոցը դանդաղում է, որ մեր մայրերը չեն կարողանում ղեկավարել երեխաների դաստիարակութեան գործը. ուսումնարանը տրանջում է, որ իր չինածը՝ ընտանիքը ջանդում է,—և այնու ամենայնիւ ոչ ոք չէ ուղում աչքերը բանալ և տեսնել, թէ կրնա իր այժմեան կրթութեամբ, իր այժմեան հասկացողութեամբ, իր այժմեան դրութեամբ կատարելապէս անկարող է երեխաներ դաստիարակել, երեխաներ կրթել, երեխաներ մեծացնել, այնպէս, ինչպէս այդ հասկանում, պահանջում է մանկավարժութիւնը, բժշկութիւնը, տարրական առողջապահութիւնը....

Ահա ձեզ մի մայր.—նա օրիորդ ժամանակ ունէր չէ սովորել, նա տարրական տեղեկութիւններ անգամ չունի մանկավարժութիւնից, բնաօսութիւնից, մարդակազմութիւնից, հոգեբանութիւնից.—ուրեմն ինչպէս կարող է նա գիտակցաբար ղեկավարել իր մանուկների կրթութեան գործը, ինչպէս նա կարող է պահել և պահպանել նրանց այնպէս, ինչպէս վայել է մի կրթված մօր:

Մեզ մօտ երեխաների դաստիարակութեան և պահպանութեան գործին՝ լուսաւորված, ևւրօպական հաղուստներ հազած կինն էլ վերաբերվում է համարեա այնպէս, ինչպէս վերաբերվում էին մեր մայրերը և տատերը.—տարբերութիւնը միմիայն արտաքին փափկասիրութեան և պճնասիրութեան մէջն է, այլևս այն ծծմայրերը և դայեաները, որոնք ներկայումս իրանց ձեռքն են առել մեր ընտանիքները և երեխաների հետ անում են այն, ինչ որ իրանց քէֆը տալիս է....

Իրականութիւնը այդպիսի տխուր պատկեր է ներկայացնում. ընտանիքի մէջ մօր կրթական գերը գրօթ է հասցրած, մայրը գուրկ է այն բոլոր գիտութիւնից և միջոցներից, որոնցով միայն կարելի է լաւ կրթել երեխաներին, անհրաժեշտ են անչափաւոր, տգէտ մայրերով, և այդ բոլորից յետոյ միամիտները անընդհատ շարունակում են կրթել թէ մօր պարտականութիւնն է կրթել երեխաներին. թէ մեր մայրերը պէտք է դաստիարակեն երեխաներին այնպէս, որ նրանցից լաւ մարդիկ դուրս գան և այլ այդպիսի անվերջ Ֆրազներ....

Ձրոնցորդին, գլուխ տարան այդ դատարկ խօսքերին: Ինչ էք սպասում նրանցից, որոնց ոչինչ չէք տուել: Ինչ էք տուել նրանց, և ինչ էք պահանջում նրանցից....

Խ. Մ.

ՓՈՂՈՑԻ ԴԺՅԱՂԴՆԵՐԸ

Թիֆլիսի բուլվարների վրա և յետնկած

մի աղջիկ, որը նոյնպէս դառնում է իր հարսնացուն: Եւ այդ փոխարինումն կոչվում է «բարդերի»: Այդ հանգամանքը տեղի է ունենում դպանի անասելի շատութեան համար, որին տալու անկարող է լինում իւրաքանչիւր աղքատ ընտանիք և որը, դաւանը, քրական սովորութեան համաձայն առնվում է 30—40 հատ ուլիսար, 5—6 հատ տաւար և այլն:

Մի քանի խօսք քրդուհու աշխատանքի մասին: Քրդուհու ֆիզիկական աշխատանքը՝ համեմատելով իր մարդու աշխատանքի հետ՝ տնտեսական տեսակէտից՝ աւելի բարձր տեղ է ընդունում և աւելի գերադասելի է քան տղամարդկինը.—քրդուհին վեր է կինում քնից դեռ արեւը չը ծագած, անդադար աշխատում է ամբողջ օրը և մինչև երեկոյ գրեթէ մի րոպէ անգամ հանգիստ չէ՝ նստում: Առաւօտեան նա արձակում է կապված անասունները և քշում դէպի նախիրը, օրը երկու անգամ կրթում է կովերը, կրթում է նոյնպէս ոչխարները, կաթնը մակարդում է, պանիր կամ իւղ է չինում, խմորի է հարում և այլն: Գրանցից յետոյ թնդին է վառում և «սօջ» (կասկարայ) վրան դնելով սկսում է հացը թխել: Սակայն եթէ մի փոքր էլ աղքատ ժամանակ է դառնում, այնու ամենայնիւ այդ դէպքում դարձեալ քրդուհին պարտաւ չէ նստում, այլ քրդից նա թել է մանում, ներկում է և գործում՝ գիւլպա, չուան, թեւ, *) կարպետ և այլ այսպիսի գործուածքներ: Այն ինչ քուրդ

փողոցներում անպակաս են այն բազմաթիւ կանայք և տղամարդիկ, որոնք պտոյտ են գալիս առաւօտից մինչև երեկոյ կատաղած դէմքով, և առմով հանելով փողոցներում՝ դանդաղ անհանգիստ տեսարաններ են սարքում ամենքի առաջ:

Դրանք այն թշուառներն են, որոնց գիծ անունն են տալիս:

Այդ խեղացնոր, հիւանդ արարածները անդադար անախորժութիւններ են պատճառում թէ փողոցում անցուդարձ անողներին, և թէ նոյն իսկ տներում շատերին, իրանց տարօրինակ պահանջներով և իրանց վարմուճքով,—մի խօսքով իրանց խեղաբարութեամբ:

Այդ թշուառների դրութիւնը թեթեւացնելու նպատակով շատերը դրանց ցոյց են տալիս բարեգործական հիմնարկութիւնների ճանապարհը, որտեղ դրանց մերժում են: Մի խօսքով ամեն տեղից մերժում: Դրա հետեւանքը էլի այն է, որ նրանք մնում են փողոցում և միշտ բաղցած, միշտ անօգնական մնալով: Օրից օր աւելի են կատաղում, և իրանց կատաղութեան թոյնը թափում են առաջին պատահածի վրա:

Անպակաս են այնպիսիները, որոնք պատրաստ են իրանց կարողացածից աւելի նիւթական նրպաստ տալու այդ թշուառներին: Բայց, միթէ պէտք է ասել, որ այդպիսի պատահական օգնութիւնից ոչինչ չէ դուրս գալիս և ոչինչ էլ չէ կարող դուրս գալ:

Պէտք է փողոցից հեռացնել այդ դժբաղդներին, պէտք է նրանց մի տեղ ապաստան տալ, որ նրանք մի հաստատ հոգատարութեան ներքոյ լինեն, և միջոց ունենան դուցէ առողջանալու, և ոչ թէ՛ անկանելի յիմալի մէջ մնալով՝ աւելի էլ խրվին իրանց դժբաղդութեան մէջ, դառնալով անբուժելի գժեր, խեղացնորներ....

Եթէ տեղական բազմաթիւ բարեգործական հիմնարկութիւններից մէկը քաջութիւն ունենայ նախաձեռնութիւն յանձն առնելու, հաւատարմութեամբ լինի, որ ոչ ոք չի մերժի իր լուծան, և այդ հաւաքած գումարներից կարելի կը լինի պատուարել այն խեղաբարներին, որոնք պատում են մեր մեծանուն քաղաքի փողոցներում:

Ապա թէ ոչ քանի դնան կը շատանան փողոցի դ ժ Բ Ե Դ Ե Ի Ի թիւը, և պատահական օգնութիւնները չեն կարող դրանց մի շօշափելի օգնութիւն անել:

Այդ դժբաղդներին այժմեան միակ ապաստանը փողոցն է: Պէտք է փողոցից հեռացնել դրանց և մի տեղ պատուարել: Թէ չէ հասարակութեան փողոցային դուրսնութիւններից մէկը պիտի լինի անթիւ խեղացնորների հանդիպել ամեն օր, ամեն քայլափոխում:

*

ՄԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

Վերջին ժամանակները մի առանձին հետաքրքրութեան ու խօսակցութեան նիւթ են դարձել հայ ուսուցչի ներկան ու ապագայ վիճակը: Ո՛վ չէ գրում և չէ խօսում հայ ուսուցչի վրա: Վաղուց է, որ մի այդպիսի կենդանի համակրութիւն ու հետաքրքրութիւն չէր տեսնված մեր դրականութեան և մասնաւորապէս մեր մամուլի մէջ դէպի այդ մոռացված գործիչները, դէպի ուսուցչիները: Պարզ է, որ այդքան համակրութիւնը չէր կարող չազդել նրա վրա, մի անշնչելի տպաւորութիւն թողնելով նրա ցաւած սրտում:

Բայց այդ բոլոր միութարական համակրութեան ու հետաքրքրութեան մէջ կայ մի ուրիշ կէտ էլ, մի տխուր կողմ, որ քիչ ցաւ չէ տալիս խեղճ ուսուցչի առանց այն էլ ցաւած սրտին:

Մեր խօսքը այն տգեղ ու անտեղի նկատողութիւնների մասին է, որ անում են ունեւր, այն կարծիքը յայտնելով, թէ մեր ուսուցիչը չէ տիրում առհասարակ մտաւոր աշխատանքը և փախչում է նրանից, չէ ոգևորվում ոչ մի կենդանի գաղափարով և քնած գրութեան մէջ է գտնվում:

Մենք այդ կարծիքը, որ արտայայտում են դանաղան մարդիկ, համարում ենք միակողմանի և մեծ մասամբ անհիմն: Մենք չենք ուղում ասել, թէ հայ ուսուցիչը պակասութիւններ չունի և չը պէտք է լոյս աշխարհ հանվեն, չը պէտք է դաստապարտել հայ ուսուցչի հասարակական գործունէութեան մէջ երեցած այն բոլոր տգեղ և րեւոյթներ, որոնք վնասում են հասարակութեան առաջադիմութեան գործին: Ոչ, դրա դէմ չէ մեր խօսքը: Մենք չատ լաւ գիտենք և հասկանում ենք, որ ինչպէս մի անհատի, նոյնպէս և մի ամբողջ դասակարգի հասարակական գործունէութիւնը պիտի ենթարկվի քննադատութեան: Աւելի կատարելապէս քննադատութեան պիտի լինի նոյն այդ հասարակութեան կարծիքի աղաւթ ու անկեղծ յայտարար՝ մամուլի կողմից: Այդ ամենը հասկանում և ընդունում ենք, քանի որ դա բոլորում է կենդանի առաջադիմութեան գաղափարից: Բայց պէտք է գիտենալ, որ ամեն տեսակ տեղի ու անտեղի, կոյր ու անբարեխիղճ յարձակումներն անելը՝ ինքնաքննութիւն չէ: Այստեղ պէտք է մեծ բարեխիղճութիւն, հոգով բարձր ազնւութիւն և մտքի ճշմարիտ ու լուրջ դատողութիւն: Ձեռք կողմնակից լինելով ամենախիստ քննադատութեան անգամ, անկարելի է թոյլ տալ, որ հասարակութեան մէջ արտայայտվեն այնպիսի կատարելապէս անհիմն կարծիքները, թէ հայ վարժարանում ոչ թէ միայն փախչում է մտաւոր կենսից, այլ և, իրեն թէ նա ընկղմված է զեղխութիւնների մէջ և միայն հացի համար է ապրում... Այդպիսի մի կարծիք յայտնել—կը նշանակէ չը ճանաչել մեր վարժարանը ու թիւիւնը: Դա կատարեալ անբարեխիղճութիւն

է: Ուրանալ հաղարարող զրկանքների հետ կապված անձնուէր ու անյիւ աշխատանքը, ուրանալ առանց այն էլ մոռացված գործիչին,—անբարեխիղճութիւն է, կրկնում ենք: Եւ քիչ փաստերից են հանում այդ տխուր եղրակացութիւնը:

Տնտեսական հարցը առհասարակ մարդկային կենսի մէջ առաջին տեղն է ընդունում. այս ոչ թէ նոր ժամանակի նիւթապաշտների քարոզութիւն է, այլ բոլորովին համաձայն է վերջին ժամանակների քարոզչականութեան և այնպիսի քայնած սկզբունքների հետ: Ոչ միայն մի անհատի, այլ նոյն իսկ մի ամբողջ ազգի ապագան մեծ կախում ունի նրա տնտեսական ներկայից: Ով քաղցած է, ով օրվայ հացի կարօտ է, նա չէ կարող մտածել բարձր գաղափարների վրա: Եւ անդեմական կը լինել պահանջն քաղցածից, որ անօթի, ծարաւ՝ բարձր գաղափարներին ձգտի: Այս տարրական ճշմարտութիւն է:

Նախ՝ եթէ մեր գաւառներում կայ մի տարր, որ ունի մտաւոր կենսի, որ հետաքրքրվում է մեծաւոր շարժումներով, որ հետևում է գրականութեան—դա վարժապետներն են: Դժուար թէ մէկը լինի, որ այնքան հետաքրքրվի մեր դրականութեան ու նոր գրքերի հարցով, որքան հայ ուսուցիչը: Ոչ ոք այնքան սրտանց ու անկեղծ չէ ուրախանում ամեն մի նոր գրքի լոյս տեսած ժամանակ, որքան ուսուցիչը: Այսպէս տեսել ենք, այսպէս գիտենք ենք, այսպէս էլ ասում ենք: Սակայն կայ մի և երրորդ խնդիր:

Որտեղ կարող է վարժապետը ամեն բան, քանի որ այդքան նիւթական միջոց չը կայ: Մեր գաւառական շատ կենտրոններում է ժամանակը դրադարանի չը կան. մեր ուսումնարաններում, որտեղ նրանք ծառայում են, հազիւ թէ մի քանի տասնեակ գրքեր կան, այն էլ մեծ մասը անպէտք ու աւելորդ. չը պէտք է մոռանալ որ այդքան էլ հայ ուսուցչիներն աշխատանքի արդիւնքն է. էլ քրտեղ գտնի գիրք: Նա այնքան միջոց չունի, որ կարողանայ բոլոր ուղած գրքերն առնել. այդ բոլորում է չի տեսնի ուսուցիչը: Նա իր ծանր, կենսից մաշող դասերի արհամարհված դնով հազիւ իրան կարողանայ պահել, հազիւ իր հացը ծախէ: Եթէ այդքան էլ կարողանայ, դա արդէն մեծ բան է, ուր մնաց թէ աշխատի գրքեր առնել կարդալու համար: Ով չէ ուղում որ այդպէս լինի. ով չը գիտի, որ դա քիչ չէր նպաստի թէ նրանց և թէ մեր գրականութեան առաջադիմութեան. բայց միթէ չը գիտենք որ այդքան իրաւունք հայ ուսուցչին չէ տրված. նրա վրա ոչ ոք չէ մտածում. նա ամենքից մոռացված է... Եւ այդ բաւական չէ, կան աստիճան, որ հայ վարժապետը միայն հացի համար է ապրում, իսկ կենսիցը այնպիսի գործի հեղքումն է այդ անմիտ ու թիւիւնը: Դա կատարեալ անբարեխիղճութիւն

է: Ուրանալ հաղարարող զրկանքների հետ կապված անձնուէր ու անյիւ աշխատանքը, ուրանալ առանց այն էլ մոռացված գործիչին,—անբարեխիղճութիւն է, կրկնում ենք: Եւ քիչ փաստերից են հանում այդ տխուր եղրակացութիւնը:

Տնտեսական հարցը առհասարակ մարդկային կենսի մէջ առաջին տեղն է ընդունում. այս ոչ թէ նոր ժամանակի նիւթապաշտների քարոզութիւն է, այլ բոլորովին համաձայն է վերջին ժամանակների քարոզչականութեան և այնպիսի քայնած սկզբունքների հետ: Ոչ միայն մի անհատի, այլ նոյն իսկ մի ամբողջ ազգի ապագան մեծ կախում ունի նրա տնտեսական ներկայից: Ով քաղցած է, ով օրվայ հացի կարօտ է, նա չէ կարող մտածել բարձր գաղափարների վրա: Եւ անդեմական կը լինել պահանջն քաղցածից, որ անօթի, ծարաւ՝ բարձր գաղափարներին ձգտի: Այս տարրական ճշմարտութիւն է:

Նախ՝ եթէ մեր գաւառներում կայ մի տարր, որ ունի մտաւոր կենսի, որ հետաքրքրվում է մեծաւոր շարժումներով, որ հետևում է գրականութեան—դա վարժապետներն են: Դժուար թէ մէկը լինի, որ այնքան հետաքրքրվի մեր դրականութեան ու նոր գրքերի հարցով, որքան հայ ուսուցիչը: Ոչ ոք այնքան սրտանց ու անկեղծ չէ ուրախանում ամեն մի նոր գրքի լոյս տեսած ժամանակ, որքան ուսուցիչը: Այսպէս տեսել ենք, այսպէս գիտենք ենք, այսպէս էլ ասում ենք: Սակայն կայ մի և երրորդ խնդիր:

*) Թեւը մեծ խուրջինի ձև ունի, ինչպէս երկու չուանի կարած իրար, որի մէջ իրեն լցրած քրքերը միշտ բարձում են իրանց՝ դրաստներին:

*) Ձուրան կանանց երկար հագուստ է, կարմիր մահուղից կարած: ***) Լբարան տղամարդի շոր է մահուղից կարած, կարճ է, մինչև գոտին. թերեք կապայի ձև ունեն և վերան ոսկեգոյն թելերով ասեղնադրած:

չէ ձանձրանում: Պատահում է, որ յղի կանայք ծնում են նոյն իսկ ձանապարհի վրա՝ քուլելու միջոցին: Նրա համար նոր չէ այդ կենսիցը, այլ նա արդէն ընտելացել է այդ կենսիցին: Մենք անմիջապէս յետոյ քրդուհին փախվում է իր մանուկ երեխան մի կեղտոտ փաւակ կամ չորի մէջ, կապում է իր չալակին և կրկին շարունակում է իր ձանապարհը: Նա չունի փափուկ անկողին պառնելու համար. չունի նոյնպէս հաստատ բնակարան, որպէս զի իր ծննդական ցաւալի ժամերը անցկացնէր այդտեղ.... Այդ երջանկութիւնը նրան չէ պարգեւել իր սե բաղդը: Նա կարծես ստեղծվել է կրեւո գրկանքներ և թափառականութեան անվերջ տառապանքների միայն....

Հարկաւոր է ասել քանի որ մեր դադաւրում թափառական կենսի վարելուց: Վերջին տարիներս մեր յիշած քրդերից թուով մի քանի տասնեակ ընտանիքներ միայն հիմնել են իրանց համար 3 հատ գիւղեր, իրանց հաստատ բնակութեան համար տներ շինելով: Յիշեալ ճանապարհը գիւղացի քրդերը, բացի իրանց սովորական խաչ-նարածութիւնից և անասնապահութիւնից, պարապում են նաև հողագործութեամբ, թէ և իսկապէս հողագործութիւն չէ կարելի անուանել:

Բացի այդ գիւղերից, Նոր-Բայազետի ամբողջ գաւառում՝ թէ հայ և թէ թուրք գիւղերում՝ տարիներից ի վեր տարածված են բազմաթիւ քրդեր, որոնք վարձվում են տեղացի բնակիչներից խաչնարածութիւն անելու նպատակով և որոնք իրանց ամբողջ ընտանիքներով շատ զիւրալի և թեթեւ ապրում են ունենում հայ գիւղի-

աւելացնելն աւելորդ է: Մենք մեր կողմից մեր վարձակալներին կը մեղադրենք մի բանի մէջ— այն է, որ զարդոցից դուրս նրանք չափ քիչ են հետաքրքրուում ժողովրդի խնդիրներով, շատ քիչ են զբաղուում ոչ-զարդացական կեանքով, և իրանց ոյժերի մի մասը չեն նուերում տեղական կեանքի ուսումնասիրութեան: Բայց մի բան կայ, մի կողմից եթէ մեղադրենք էլ ուսուցչին, միւս կողմից պէտք է համաձայնել, որ այդ ուսումնասիրութեանը պահանջում է մօտիկ ծանօթութիւն այդ թիւերէ հետ, մի առանձին հմտութիւն և նոյն իսկ մասնագիտութիւն: Չէ կարելի մեր բոլոր ուսուցիչներին պահանջել, որ նրանք յօգուածներէ զքնն ժողովրդական կեանքի մասին, քանի որ ամենքն ալքան պատրաստված չեն, որ կարողանան առանց դժուարութեան այդ հարցը մշակել: Մի քանի տարի առաջ Պետերբուրգի նահանգական զեմստովն հրաւեր կարդաց նահանգի ժողովրդական ուսուցիչներին—վիճակագրական տեղեկութիւններ հաւաքել—տեղական ռուս ազգաբնակչութեան տնտեսական վիճակի մասին: Բայց քիչ հետեանք ունեցաւ այդ հետաքրքրի գործը: Գուրա եկաւ, որ ուսուցիչներին հաւաքած վիճակագրական տեղեկութիւնները մեծ մասամբ անբաշխուրդ ու սխալ էին, այնպէս որ զեմստովն այդ տեղեկութիւնները լրացնելու և ուղղելու համար ստիպված եղաւ նորից մարդիկ ուղարկելու, բայց այս անգամ էլ չը համարեալվելով այդ գործը հաւատարմ ուսուցիչներին, այլ թողնելով աւելի պատրաստված, մասնագէտ ստատիստիկներին: Եւ այս ոչ թէ մի նահանգում, այլ Ռուսաստանի շատ տեղերում ժողովրդական կեանքի ուսումնասիրութիւնը զեմստովնների կողմից ընտրված առանձին մասնագետներին ձեռքով է կատարվել:

Ուր կը մնայ պահանջել մեր խեղճ ուսուցչից, որ լուրջ յօգուածները գրէ այդ հետաքրքրի ու ծանր հարցի մասին: Բացառութիւններ, ի հարկի, կը լինեն և եթէ վարձակալները ուզենան, գուցէ կարող են մի կերպ ձեռնառու լինել այդ գործին: Աշխատանքով մարդս ամեն դժուարութեան կարող է յաղթել. աշխատանքով ու ինքնակրթութիւնով մարդս շատ բանին կարող է հասնել, այդ ճշմարիտ է: Բայց միայն մեր ուսուցչին համար իրագործելի չէ: Տնտեսական ծանր պայմաններին մէջ խեղդված, ինչ միջոցով և ինչ սրտով կարողանայ ուսուցիչը աշխատել, դարձեալ նա և կատարելագործվել... Ինչպէս անի վարձակալը, որ այն խղճալի վիճակի մէջ իրան նուրի և ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան, և ուրիշ հասարակական խնդիրների զարգացման կեանքից դուրս:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, 17-ին հոկտեմբերի, Թագաւոր Կայսրի հրաշալի փրկութեան օրը, Թիֆլիսի Սիօնի մայրեկեղեցում և միւս դաւանութիւնների եկեղեցիներում մատուցվեցին կատարվեցան: Գաղափարները օր դարձաւրված էր գրօշակներով, իսկ երկրպագան լուսաւորված էր:

Երեւոյն մեղ գրում են. «Թեմական զարդոցի ուսուցիչներին խումբը կազմակերպված է արդէն, մնում է հոգաբարձութեանը հոգալ ուսուցիչներին ուղեւորները կանոնաւոր կերպով վճարելու մասին: Առում են, որ կան ուսուցիչներ, որոնք չորս ամսվայ ուղեւոր դուռ ևս չեն ստացել, իսկ վերջին ամսվայ ուղեւոր նրանցից ոչ ոք դուռ չէ ստացել: Յայտնի է, որ զարդոցի եկամուտները չեն ծածկում ծախսը, ուրեմն հոգաբարձութիւնը պէտք է եկամուտների նոր աղբիւրներ որոնէ և գտնէ: Մենք չենք կարող եկամուտի նոր աղբիւր համարել այն կարգադրութիւնը, որով թիմի ծխական զարդոցների ուսուցիչները ուժիկից 20% կը վերցնակ և դրանից գոյացած գումարը կը յատկացվի թեմական զարդոցին: Արդար չէ, մեր կարծիքով 200 բուրջի ստացող զիւղական ուսուցչին ուժիկից վերցնել 20% և տալ 1.000 բուրջի ստացող քաղաքի թեմական զարդոցի համալսարանական ուսուցչին: Լաւ կը լինէր, եթէ հոգաբարձութիւնը ուրիշ աղբիւրներ որոնէր:

Նորերս Վշակի մէջ տպված էր, որ Թիֆլիսի արքայական հայ օրիորդների Լիգա և Մարիա Սովետան ազգամտնով, մտադրել էին մասնագիտական նուրթիւնը ընդունել, և գտնվում էին մի թուրքի մօտ, բայց կրտսերին քահանայ Արարատեանց ինչ և պարտքերի խնդիրը ճաշակի և քաղաքական

նրանց քարոզչութիւնը հեռացրել էր թուրքի մօտից և մի հայ կնոջ մօտ իբրեւ թէ նրանց կերակրում էր իր հայուի: Այժմ տեղեկանում ենք, որ այդ օրիորդները՝ ապրուստի որ և է միջոցից դուրս լինելով, դարձեալ գտնվում են յիշեալ թուրքի մօտ և մտադրել են անպատճառ մասնագիտութիւններ ընդունել, իսկ թուրքը խոստացել է այդ երկու քոյրերից մէկին հետ ամուսնանալ ու իր հետ տանել Պարսկաստան:

ՋԱԲԱՍՈՒԱՍԵՒՅ մեղ գրում են. «Ամսիս 13-ին սուրբ թարգմանիչների տօնի առիթով, տեղիս երկրպագան զարդոցում մասնական երեկոյթ էր, առաջնորդութեամբ նոյն զարդոցի երկու ուսուցիչներին: Ներկայ էին տեղիս գաւառապետը, ուրիշ բարձրագույն անձինք, և խումբը բաղաձայնութիւն ժողովրդի. կային բաւականաչափ տիկիներ և օրիորդներ: Ընթերցանութեան նիւթերն ընտրութիւնը բաւական աջող էր և ժողովրդին մատչելի: Երգիցան երգեր: Խօսեց ս. թարգմանիչների մասին ուսուցիչ պ. Արմանց, ծանօթացնելով ժողովրդին այդ անմահ գործիչներին հետ Յետոյ խօսեց աւագ-ուսուցիչ պ. Մուրադեանց, վերջինով բնաբան բարեգործութիւնը, հասկացնելով ժողովրդին այն բոլոր բազմակողմանի օգուտները, որոնք արդիւնք են բարեգործութեան:

Չանաղան պարապմունքների մարդկանց համար շուկ-շուկ կուլանք բանալ սովորութիւն է դարձել ոչ թէ Եւրօպայում, այլ և Պետերբուրգում: Բիծիչները իրանց առանձին կուլան են հիմնում, փաստաբանները իրանցը, ինժեներները իրանց համար բանում են առանձին կուլու, կանաչք առանձին: Վառ չէր լինի, եթէ այդպիսի մի օդի մտներ և մեր ինտելիգենցիայի մէջ, որը համարելով մեր այժմեան կուլաները ժամաւաճառութեան և թղթախաղութեան տեղ միայն, երբեք փորձ չէ փորձում հիմնել այնպիսի կուլան, որտեղ ինտելիգենտ մարդիկ կարող լինեն շօտաւարը միացնել դուրեկանի հետ: Մեր ինտելիգենցիային պատկանողները զանգաւորում են, որ մեր կուլաները այնպիսի ձև են ստացել, որ այնտեղ զնաքող կարող է միայն թուղթ խաղալ, եթէ չէ ուղում միայն չորանջելով: Ժամանակ անցկացնել, —բայց այդ անկերջ զանգաւորների հետ միասին ոչ մի չըլնան Թիֆլիսում չէ մտածում հիմնելու քաղաքի մէջ գէթ մի նոր այնպիսի կուլու, որը լինէր յիշեալ մարդկանց համար մի օգուտէտ ժողովարան, և ոչ թէ փողեր տանել տալու և ընթերցանք անելու տեղ:

Մեղ ուղարկված է մի գրքոյ՝ «Գիւլէ» անունով, աշխատութիւն պ. Յ. Ղազարեանի. դա քերական կեանքից վերցրած մի պատկեր է, գրված բաւական կենդանի կերպով: Գրքոյից լոյս է տեսել «Աղբիւր» ամսագրի հրատարակութեամբ, և արժէ 15 կօպէկ:

«НОВ. ОБОЗ.» լրագրի վերջին մի քանի համարներում տպագրվեցան փաստաբան Պիւլչեկովու գործի մանրամասնութիւնները, որի մէջ այդ լրագրի խմբագիրը, պ. Ուսպենսկի մեղադրվում է զրկարտութեան մէջ: Մենք արդէն հաղորդեցինք, որ պ. Ուսպենսկի արդարացաւ, և այդպիսով Պիւլչեկովու գանգատը անհետանք մնաց: Խօրհուրդ ենք տալիս կարդալ «НОВ. ОБОЗ.» մէջ այդ գործի մանրամասնութիւնները. այդտեղ պարզ երևում է փաստաբան Պիւլչեկովու քաղաքագործութիւնները մի կողմից, և Մանիլի դժբաղդութեան մնացած հերոսների սխրագործութիւնները միւս կողմից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՖԻՆԱՆՍԻՍՏ

Ֆրանսիական պարլամենտական չըջաններում և լրագրութեան մէջ սկսել է երևան գալ մի նոր խնդիր,—այն է պետական ֆինանսական խնդիրը: Լրագրութեան մէջ սկսել են խօսել այն մասին, որ հանրապետութեանը վրանդ սպառնացող ամենապետեղաւոր հարցերը քաղաքական հարցերը չեն, այլ պետական պարտքերի հարցը:

Եւ, անկասկած, նոյն իսկ հանրապետական չըջաններում այդ առիթով աւելի խիտ ընդհարումներ կը լինեն, քան թէ քաղաքական որ և է խնդրի առիթով, քանի որ պետական ֆինանսներին և պարտքերի խնդիրը ճաշակի և քաղաքական

ենթադրութիւնների խնդիր չէ, այլ մի այնպիսի խնդիր, որ կանոնաւոր է ամբողջ կառավարութեան առաջ և լուծումն է պահանջում:

Ֆրանսիական մի լրագիր, այն է «XIX Siècle» լրագիրը վերջերս մի յօդուածի մէջ ասում է, որ այժմ ֆրանսիական պետական պարտքը հասնում է 31 միլիարդ ֆրանկի: Երբեք գուցէ Ֆրանսիան չէ ունեցել այդպիսի մեծ պարտք: Ֆրանսիան իւրաքանչիւր տարի ահադին գումարներ է տալիս պետական գանձարանին, և այն էլ հազիւ է վճարում սոկոսը: Մինչդեռ եւրօպական մի քանի պետութիւններ աստիճանաբար հանգցնում են իրանց պարտքը, Ֆրանսիայի պարտքը, ընդհակառակն, աւելանում է:

Ինչ կը կայ դրա համար: Եւր գտնելը դժուար է շատ: Եթէ հանրապետական կառավարութիւնը մաքուր անգամ անցկացնէ շատացնել հարկերը, դրանով նա իր անկումը միայն կը պատրաստի: Երկրի մէջ զանազան տեսակ հարկերն առանց այն էլ այնքան շատ են թվում ժողովրդին, որ մտածել նոր հարկեր դնելու, կամ եղած հարկերը շատացնելու մասին, կը նշանակէ մի սարսափելի խառնաշփոթութիւնների դուռ բանալ: Հանրապետական կառավարութիւնը այդ չի անի, որովհետեւ դրանով մի շատ զօրեղ դէմը տուած կը լինի հակառակորդների ձեռքը:

Ոմանք առաջարկում են ոչնչացնել մի քանի ծախսեր, որոնք անհրաժեշտ չեն, և այդպիսով տարեկան մի որոշ խնայողութիւն անել: Անկասկած դա միայն ծանաղարար կը լինի: Պետական կեանքի մէջ ներկայումս սովորութիւն է դարձած այնպիսի աւելորդ և չափից դուրս մեծ ծախսեր անել զանազան ոչ-անհրաժեշտ բաների վրա, որ առանց խղճահարկելու, կարելի է ոչնչացնել այդ ծախսերը, ոչնչալ մնա չը պատճառելով պետական կեանքին:

Այդ է միակ միջոցը, որով հանրապետութիւնը կարող կը լինի մի կողմից պետական ծախսերը քննարկել, և միւս կողմից քիչ-քիչ հանդիման պետական պարտքը, որ եթէ ներկայ դրութեան մէջ մնայ, կարող է մեծ վտանգ սպառնալ նոյն իսկ իրան հանրապետական կառավարութեանը, նեղ դրութեան մէջ դնելով երկրը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինից գրում են, որ Վիլհելմ կայսրը դեռ վաղուց պատրաստութիւններ էր տեսել ֆէլդմարշալ Մօլաթի ծննդեան 90-ամեակը տօնելու, ցոյց տալու համար իր համակրութիւնը դէպի նրա անցեալը և ուղղութիւնը:

Պարիզից գրում են, որ միապետական կուսակցութիւնը դրականապէս պահանջում է Պարիզի կոմիտեի, որ նա հրաժարվի գահից՝ յօգուտ իր որդու, այն է Օրլէանի դուքսի, թողնելով մի և նոյն ժամանակ, որ Օրլէանի դուքսը ղեկավարի միապետական կուսակցութիւնը: Լուր կայ, որ Պարիզի կոմիտե հրաժարվել է այդ առաջարկութիւնը կատարելուց:

Հալլում գումարված սօցիալական կոնգրէսը փակվեց: Կոնգրէսի ժամանակ, ի միջի այլոց, վճարված է, բայց զլիաւոր օրդանից, հիմնել տեղական սօցիալական լրագիրներ, որոնք պէտք է ունենան միատեսակ ուղղութիւն:

Լրագիրները հաղորդում են, որ Կապրիվի կանցլէրը շուտով տեսակցութիւն պիտի ունենայ Կրիսպիլի հետ:

Հռօմի պապը մի հանրագիր հրատարակեց, որի մէջ այն միտքն է յայտնվում թէ Հռօմը չէ կարող բաժանված լինել իր և թագաւորի մէջ: Պապը ամբողջ Հռօմն է ուղում և ասում է, որ երկու իշխանութիւններ միաժամանակ Հռօմում գոյութիւն ունենալ չեն կարող: Մի և նոյն ժամանակ այն միտքն է յայտնվում, որ Հռօմը պային վերադարձնելու, Կապրիվի ահադին օգուտներ կունենայ և նոր ոյժ կտանի:

Վ. Պօլսից հեռագրում են. «Երբ օր է արդէն բանակցութիւններ են լինում Բ. Դրան և տիեզերական պատերազմի մէջ: Թիւրքաց պաշտօնական անձանց հրամայված է զեկուցում ներկայացնել եկեղեցական հարցի մասին: Յունաց եկեղեցիները դեռ փակված են, բայց կարծում են, որ Բ. Դուռը մօտիկ ապագայում երկու կողմերի համար ևս բաւարար կերպով լուծում կը տայ հարցին: Եկեղեցիները փակվելու առաջին կիրաւին խաղաղ անցաւ: Պէրայում, Գալատայում և Գանարում:

—Երկրորդում արտաստանած իր ճառի մէջ, Ուլիամ Գաղատոն յայտարարեց, որ Իրանդիպում կատարված անօրէնութիւնները վկայում են, որ այնտեղ անհրաժեշտ է ինքնավարութիւն մտցնել: Գաղատոն այն համոզմունքը յայտնեց, որ Անգլիայում չուտով լինելի ընդհանուր պարլամենտական ընտրութիւնների ժամանակ յաղթութիւնը աղատամիտներին կը մնայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնի ճանապարհորդ Ստենլի ուղեւորվեց Ամերիկա:

Մեղ մօտ թատրոնական ներկայացումները ըսկալում են երեկոյեան ժամը 8-ին, իսկ Չինաստանում պալատական ներկայացումները սկսվում են առաւօտեան ժամը 8-ին: Կայսրը միշտ ներկայ է լինում այն ներկայացումներին:

Ամերիկայում մի քանի ժամանակից ի վեր ըսկալել են հիմնվել կանանց կուլուրն: Այդ կուլուրները մեծ թվով անգամներ ունեն: Այդտեղ կարգացվում են դասախօսութիւններ, լինում են ներկայացումներ և ժողովներ զանազան հարցերի համար:

Խալիպայի տնտեսական դրութիւնը քանի գնում վատանում է: Պաշտօնական տեղեկութիւններին նայելով, այժմ Լօմարդիպում կան 100.000 անգործ բանուորներ, Պիլմօնտում՝ 60.000 և Բօմանիպում՝ 150.000 անգործ բանուորներ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍԵՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 16 հոկտեմբերի: Մեծ Իշխան Նիկօլայ Նիկօլաւիչ Անդրանիկի հիւանդութեան վերաբերեալ երէկայ թիւլումներն նայելով, հիւանդութեան այն նշանները, որոնք կեանքին վտանգ էին սպառնում, անցան. հիւանդութեան ընդունեց իր սովորական ընթացքը:

ՍԱՐԱՏՈՎ, 16 հոկտեմբերի: Գլխաւորական Եւրօպայայ Պօլիանա Կօլման, ի յիշատակ 1888 թիւ հոկտեմբերի 17-ի հրաշալի փրկութեան, կառուցեց քարեայ տուն՝ ռուսաց զարդոցի համար:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 հոկտեմբերի: «Гражданин» լրագիրը կասկած է յայտնում երկրագործական միլիտարութիւն հիմնելու մասին և այն լուրերի ճշդութեան մասին, որոնք վերաբերվում են քաղաքային բէֆօրմների նախագիծը պետական խորհրդի հետեւալ նստաշրջանին յետաձգելուն: Մրցանակ է առաջարկված Մօգրէլի նահանգի Լէնոյ գիւղի մօտ արձան կանգնեցնելու նախագիծ համար. այդ գիւղի մօտ Պետրոս մեծը 1708 թվին ջարդեց Լէվէնգաուպոլիս: «НОВ. ВРЕМЯ» լրագիրը հաղորդում է, որ գիւղացիներին խաւար միջնորդներից պաշտպանելու համար, նախագիծվում է զեմստովի գլխաւորների, դատաւարների համալուծար ժողովներին կից հիմնել հաւատարմատարների ինստիտուտ գիւղական գործերի վերաբերմամբ: Հաւատարմատարները պետական ծառայութեան մէջ կը գտնվեն, մինչև 500 բ. արժուութեան գործերը անվարձ կը կատարեն, իսկ դրանից բարձր արժողութիւն ունեցող գործերից մի յայտնի պրօցէնտ կը ստանան: Ամեն տեսակ միջնորդների գործունէութիւնը արգելված կը լինի:

ՆԻՃՆԻՆՈՎԳՈՐԳ, 17 հոկտեմբերի: «Дружествен» ընկերութեան պարտատէրերի ժողովում ՆիՃէգօրգեան բօրսային վաճառականութիւնից վեց աղմկիտարատորներ են ընտրված՝ Բուրգով, Եալով Բաշկիբով, Չէնսով, Եարգօմսկի և Կերշեաում և նոյնպէս նախկին դիրեկտոր Շիպով:

ՊԱՐԻՉ, 17 հոկտեմբերի: Երէկ կայացաւ ռուսաց դեպուտի աղջկայ քաղաքացիական պատկաւորութեան հանդէսը վիկունտ դէՄէդի հետ: Պատգամաւոր Ֆրէնցիսկան օֆիցէրին, դրանով երկու ժողովուրդները բարեկամութեան մեծ տպացոյց է տալիս և յարգանք է ցոյց տալիս ֆրանսիական զօրքին:

ՀԱՂԱ, 17 հոկտեմբերի: Երէկ կայացաւ երկու ժողովների առաջին նիստը: Մինիստր Մակայ դեկուցում արեց թագաւորի առողջութեան դրութեան մասին. բժիշկները հաստատում են, որ թագաւորը անկարող է պետութիւնը կառավարել. արդարադատութեան և կօլնիաների միջնաւո-

